## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2024թ. N 834-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 25 ՇԵՆՔ 49 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Արսեն Վլադիմիրի Խաչատուրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 25 շենք 49 բնակարանի (վկայական՝ 0167523, տրված՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 25 շենք 49 բնակարան:

2.Դիմել Կադաստրի Կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2024թ. N 835-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 20 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Լենա Ռաֆիկի Կարայանի դիմումը՝ **որոշում եմ**.

1.Լենա Ռաֆիկի Կարայանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 1 շենքի թիվ 20 բնակարանի (վկայական՝ 0187109, տրված՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 1 շենք 20 բնակարան:

2.Դիմել Կադաստրի Կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2024թ. N 836-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Ավագ Ջարիպի Ղարիբյանի լիազորած անձ Անուշ Արշալույսի Առաքելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Ավագ Ջարիպի Ղարիբյանին պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքում գտնվող անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0049-0004-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 4-րդ փողոց 7:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2024թ. N 837-Ա

## ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծածկերը, ձեղնահարկը և ինքնակամ բացված 3 լուսամուտները կառուցվել են 2007 թվականին, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և հիմք ընդունելով չափագրման հատակագծերը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված 2024 թվականի հոկտեմբերի 18-ի տեխնիկական եզրակացությունն ու Գայանե Սարգսյանի լիազորած անձ Արթուր Միրիջանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գայանե Հրաչիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նուռնուսի այգեզանգված 14 թաղամաս թիվ 58 հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0143-0029) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 8-րդ փողոց 60:

2.Քաղաքացի Գայանե Հրաչիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս դարանի թաղամաս 8-րդ փողոց 60 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0143-0029, հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023AT6MRP) 0.049 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 115.3 քմ արտաքին (98.1 քմ ներքին) մակերեսով բնակելի տան ձեղնահարկը, 107 քմ մակերեսով ծածկերը և ինքնակամ բացված 3 լուսամուտները ճանաչել օրինական:

3.Գայանե Հրաչիկի Սարգսյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 320376.6 (երեք հարյուր քսան հազար երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ վեց տասնորդական) դրամ՝ 2007 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան ձեղնահարկի, ծածկերի և ինքնակամ բացված 3 լուսամուտների օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2024թ. N 838-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ՌԻՍԿԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 101-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի 29-րդ կետը, Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կոմիտեի 2024 թվականի դեկտեմբերի 02-ի N ՆԱԿ-10/24 նիստի որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2025 թվականի ռիսկի չորս ընտրանքային չափորոշիչները՝ հետևյալ կազմով.

1) նշանակալիություն,

2) ֆինանսական ազդեցություն,

3) ստացված ֆինանսավորման չափ,

4) հայտնաբերված թերացումներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 դեկտեմբերի 2024թ. N 839-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 02-ի№01/03.1/08363-2024 գրությամբտրված համաձայնությունն ու Լիլիթ Երվանդի Բաղդասարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Փոփոխել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան Ամառանոցային փողոց 86/5 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր 07-003-0002-1052) 0.066 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ դարձնելով բնակելի կառուցապատման՝ համաձայն հաստատված հատակագծերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 դեկտեմբերի 2024թ. N 840-Ա

### ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ ***որոշում եմ.***

1.2024 թվականի դեկտեմբերի 06-ից մինչև 22-ը ներառյալ Բյուրեղավան համայնքում կազմակերպել հանրային քննարկումներ Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ:

2.Հանրային քննարկումները կատարվելու են Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի՝ byureghavan-kotayk.am, և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ e-draft.am, միջոցով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 06
ք. Բյուրեղավան